ՀԱՅ ՀԱՏՈՒԿ
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԲԱԺԻՆ
«ԳՈՐԾՅԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ»
ԾՐԱԳՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

16-ը դեկտեմբերի, 1999 թ. Թիվ 4

ԳՈՐԾՅԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ

ՀՈԳԵՎՈՐԻ ԴԵՐԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

«Գորդյան հանգույց» ծրագրի հերթական քննարկմանը մասնակցում էին

ՀՀ վարչապետի խորհրդական, կրոնի գործերով խորհրդի նախագահի պաշտոնակատար
Լևոն Մկրտչյանը

ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի դեկան
Շահե արքեպիսկոպոս Աճեմյանը

ԵՊՀ սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր
Լյուդմիլա Հարությունյանը:

«Գորդյան հանգույց» ծրագրի տեղեկագիր
Հայաստանի ամերիկյան համալսարան
Հատուկ դասընթացների բաժին
URL:// www.aua.am/aua/extens/lectures

Ծրագրի համակարգող՝
Հրայր Զորյան

Հայաստանի ամերիկյան համալսարան
ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 40
հեռ. 27-16-58

Հասցեատեր՝

Քննարկումը չընթացավ հոգևորի՝ որպես զուտ կրոնական սկզբունքի դիտարկումով: Քննության առնվեց ընդհանրական հոգևոր կառույցը՝ որպես ոչ նյութական արժեքների համակարգ, խոսակցությունն ընթացավ ներկա իրավիճակում Հայաստանի և հայ ազգի համար հոգևոր արժեքների դերի ու նշանակության շուրջ:

Ըստ Լևոն Մկրտչյանի, այն գործընթացները, որոնցում հայտնվել է Հայաստանն արցախյան շարժումից մինչև անկախության սկիզբն ու պետականության կառուցումը, ուղեկցվում են իդեալների, գաղափարախոսությունների, սկզբունքների, հոգևոր կյանքի լուրջ փոփոխություններով, երբ ջարդվում են որոշակի կաղապարներ, կենցաղը, կենցաղային արժեքային համակարգը: Այդպիսի շրջադարձերից հետո հասարակությունը փորձում է կամ իր ավանդական արժեքների հիմքի վրա ձևավորել նորը կամ ընդօրինակման միջոցով ամբողջացնել այն արժեքահամակարգը, որով պիտի ընթանա առաջ: Դրված է բարդ խնդիր. Հայաստանում՝ հայրենիքի մի փոքրիկ հատվածում, ուր ապրում է հայության ոչ ավել 40%-ը, ձևավորել անկախ պետականություն, միաժամանակ արտահայտելով ամբողջական մի ազգի նպատակներ, որը սփռված է աշխարհում և որի հատվածները տարբեր պայմաններում փորձում են պահպանել իրենց արժեքները: Այս պարագայում վճռական է դառնում ոչ նյութականը՝ բարոյական այն համակարգը, որը հնարավորություն պետք է տա կողմնորոշվելու առկա խայտաբղետ հարաբերություններում:

> *«Այսօր հայության հոգևոր կառույցի մեջ չամբողջացված տեղեր կան, հստակ չէ, թե ինչ հիմքերի վրա պետք է այն հենվի»:*

Լևոն Մկրտչյանի կարծիքով, 21-րդ դարը բոլորովին այլ պահանջներ է ներկայացնելու, և բավարար չի լինելու միայն անցյալի արժեքներով առաջ գնալը: Նախ հարկավոր է մի քանի հարցադրումների պատասխանները գտնել: Համանման իրավիճակներում մի շարք ժողովուրդներ փորձել են իրենց արժեքային համակարգը ձևավորել շարունակականության տեսության հիման վրա, որն իր մեջ ներառում է զարգացման մեծ աստիճան: Մինչդեռ հայերի բառապաշարում գերիշխողը «ազգապահպանում», «գոյատևում», «ինքնապաշտպանություն» և նման բառերն են, և քիչ տեղ ունի զարգացումը: Հայության էներգիան, իբրև ծանր արհավիրքներ տեսած ժողովուրդ, հիմնականում կենտրոնացած է պահպանիչ բնազդների վրա: Սրանով պայմանավորված սփյուռքահայերի հոգեբանության մեջ մեծ տեղ ունի համայնքային, ամփոփվելու տրամաբանությունը, հայաստանցիներին բնորոշ է անկլավային մտածողությունը:

(շարունակությունը 2-րդ էջում)

Բնորոշ է նաև այն, որ շուրջ 70 տարի ունենալով հայկական օջախ, այսուհանդերձ չի ձևավորվել ազգային հստակ գաղափարախոսություն: Միասնական պետությունում իշխող մեկ գաղափարախոսությունը որոշակիորեն վանել է այն հոգևոր, ավանդական արժեքները, որոնք բնորոշ են ինքնուրույն զարգացող ժողովուրդներին: Դրանցից մեծագույնը պարոն Մկրտչյանը համարեց ազգային-կրոնական գաղափարախոսությունը, որը հայերն ունեցել են աշխարհում առաջիններից մեկը, որը, սակայն, վերջին տասնամյակների ընթացքում հասարակական տրամաբանության մեջ իր տեղը զիջել է:

Լևոն Մկրտչյանի կարծիքով հոգևոր հաջորդ խնդիրն այն է, որ չի հաջողվել հարաբերակցել Հայաստանի հասարակության և հայրենիքից դուրս գտնվող խմբերի խնդիրները, ընդհանուր հայտարարի գալ, որոշել առաջնահերթությունները: Ըստ նրա, հարկ է կատարել համազգային գույքագրում՝ երեք հարթություններով, որից առաջինը բարոյականն է: Յուրաքանչյուր ժողովուրդ պետք է ունենա իր բարոյական այցեքարտը: Պարզ ասած, յուրաքանչյուր հայ պետք է կարողանա հակիրճ և հստակ ձևակերպել, թե ինքն ի՞նչ քաղաքակրթության կրողն է, ի՞նչ տեղ ունի աշխարհում և ի՞նչ է տվել աշխարհին: Հայերը դա չեն ձևակերպել, ուստի հարկ է նախ և առաջ բարոյական գույքագրում կատարել: Այնուհետև առաջարկվում է ֆիզիկական և նյութական գույքագրումներից հետո ի մի բերել եղած ներուժը, ապա միայն դնել ընդհանուր նպատակներ, հստակեցնել դրանց հասնելու ուղիները:

Ըստ Շահե արքեպիսկոպոս Աճեմյանի, այսօր հայության հոգևոր կառույցի մեջ չամբողջացված տեղեր կան, հստակ չէ, թե ինչ հիմքերի վրա պետք է այն հենվի: «Ազգային-կրոնական», «բարոյագիտություն», «համամարդկային արժեքներ» հասկացությունները նա դրակեց որպես շատ ընդհանուր, և եթե դրանց տեսանկյունով նայում ենք իրավիճակին, ապա այն տագնապահարույց է:

Նրա խոսքերով, երբ խոսվում է հոգևոր կառույցի մասին, նախ և առաջ պետք է նկատի ունենալ այդ կառույցի հանդեպ եղած հավատքը: Հայության ազգային հավատքը շատ պարզ է ու հստակ. այն ունի 2000 տարվա ավանդույթ, ու թեև այսօր այն նույն ձևով չի արտահայտվում, այլ ոճով է հանդես գալիս, սակայն հիմքը նույնն է՝ քրիստոնեական ըմբռնումը:

Շահե արքեպիսկոպոսի գնահատմամբ, այսօրվա Հայաստանի հոգևոր կառույցի վերականգնման համար առաջին քայլը պետք է լինի պարզելը, թե իրականում հասարակությունն ինչին է հավատում: Արդյո՞ք կա այն հավատը, որ եղած տկար վիճակով հնարավոր է լինելու հայրենիք ստեղծել բառի ամենալայն իմաստով:

Կարծիք հայտնվեց, որ ազգային գաղափարախոսության հիմնական բաղադրիչներից պետք է լինի հողի սրբությունը: Հայը պետք է հասկանա, թե որն է իր կապը հայրենի հողի հետ, որից հետո կգիտակցի, այդ հողը պաշտպանելու իր պարտականությունը:

Որպես հաջորդ կարևոր բաղադրիչ Շահե Աճեմյանը նշեց ընտանիքի սրբությունը: Այս դրսևորումը հայերի մեջ միշտ էլ խիստ արտահայտված է եղել, թեև վերջին շրջանում խաթարվել է նաև հայ ընտանիքի հիմքը: Մինչդեռ սա այն օղակն է, ուր մարդը մանուկ հասակից ստանում է իր հոգևոր սնունդը, ազգային զգացումը, արժեքային համակարգը:

Խնդրո առարկայի սոցիալական տեսանկյունը ներկայացրեց Լյուդմիլա Հարությունյանը: Գնահատելով հոգևորի դերը ներկա հասարակական հարաբերություններում, նա նշեց, որ թեև առկա են բազմաթիվ մտահոգիչ խնդիրներ, այսուհանդերձ իրավիճակը փակուղային չէ: Ըստ նրա, ներկա ժամանակաշրջանում նյութականի դերը դարձել է ահռելի և սխալ է կարծել, թե հոգևոր խնդիրների լուծումը կհանգեցնի հասարակության առողջացմանը: Միաժամանակ նա հույս հայտնեց, որ մարդու, ազգի, պետության կյանքում հոգևորի դերը շատ մեծ է, և հիմնախնդիրների լուծումները կգան հոգևորի հետ:

Տիկին Հարությունյանն ազգի գոյատևումն ու զարգացումը նախ և առաջ կապեց ազգային գաղափարախոսության մշակման հետ: Նրա կարծիքով, ազգային գաղափարը ընդհանրապես մոռացված է: Սա այն դեպքում, երբ աշխարհը հարգում է այն պետություններին, որոնք ունեն կուռ ազգային գաղափարախոսություն, որը ներառում է պետության դերը, նշանակությունը, նպատակները:

Հայությունն ունի պատմական որոշակի հոգևոր հարստություն, որն այսօր էլ շարունակում է ապրեցնել ու առաջնորդել ազգին: Որքանո՞վ է պատմականորեն ձևավորված այս հարստությունը օգնում կամ նպաստում առաջընթացին: Ըստ Լյուդմիլա Հարությունյանի, պատմական շատ դրվագների արժեքը հայությունը դեռ ինքն իր համար էլ չի պարզել: Դրանց թվում նա նշեց եղեռնը, որակելով այն որպես ամենահզոր հոգևոր հարստություն, որը, սակայն, ռացիոնալիզացիայի, ժամանակակից դարձնելու խնդիր ունի:

«Հայության էներգիան, իբրև ծանր արհավիրքներ տեսած ժողովուրդ, հիմնականում կենտրոնացած է պահպանիչ բնազդների վրա»:

Ըստ ԵՊՀ սոցիոլոգիայի ամբիոնի վարիչի, մեր երկիրը չի կարողանում օգտագործել ընտրությունները: Նրա գնահատմամբ, այսօր չի տրված այն հարցի պատասխանը, թե ո՞ր քաղաքակրթությունն ենք մենք ընտրում: Հայաստանը չի արել նաև իր աշխարհաքաղաքական, ինչպես նաև գաղափարախոսական ընտրությունը:

Տիկին Հարությունյանի կարծիքով Հայաստանում պակասում են հոգևորով, գաղափարներով, գաղափարախոսությամբ զբաղվող լուրջ մարմիններն ու հասարակության այն խմբերը, որոնք կմտահոգվեն այս հարցերի շուրջ: «Հայերը հետ նայելով, պետք է գնան առաջ», այսպիսի ընդհանրացման է հանգեցրել սոցիոլոգիական հարցումներից մեկի ամփոփումը: Սակայն, ըստ Լյուդմիլա Հարությունյանի, այդ բանաձևի բանալին դեռևս գտնված չէ:

Հնչեց այն ընդհանրական կարծիքը, որ բարձրացված հարցերն անհնար է լուծել մի քանի տարվա ընթացքում, առավել ևս ինչ-որ մարդկանց խմբով կամ ղեկավարների կամքով: Կպահանջվի երկարատև, միասնական աշխատանք: Կարևորվեցին հասարակական հարաբերություններում հոգևորի դերի մասին քննարկումները, քանի որ, ըստ Լևոն Մկրտչյանի, այդ նյութի պարզաբանմամբ է հնարավոր հասնել այն հստակ հայեցակարգի մշակմանը, որը կոչվում է ազգային անվտանգության ամբողջական հայեցակարգ: Այդ ճանապարհով է կարելի ունենալ ուրույն ձեռագիր այն ամբողջության մեջ, որը կոչվում է համաշխարհային քաղաքակրթություն: